Արձանագրություն N 2

«ՀՀՔՊԿ-ԳՀԾՁԲ-17/4» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

18.12.2017 թ.
ժ. 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ — Ս. Մաթևոսյանը ,

Հանձնաժողովի անդամներ — Վ. Առաքելյանը /գնահատող/,

Ա. Քոչարյանը /գնահատող/,

Մ. Սարիբեկյանը /բացող/,

Ն. Մանուկյանը /բացող/,

Հանձնաժողովի քարտուղար — Հ. Ավետիսյանը:

1.Գնանշման հարցման հայտերի բացման մասին

(Ս. Մաթևոսյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման առարկայի ընդհանուր գինը 1206000 ՀՀ դրամ է.

բ) գնանշման հարցման հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Հասցեն	
		Գրանցման	Էլեկտրոնային
1	<<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ	-	-
2	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	ք. Արմավիր, Սահմանապահների 92	nmuradyan55@mail.ru
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Ք. Երևան, Հալաբյան 41ա	ekspertizaproektov@mail.ru

գ) Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ՝ <<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ -ի հայտի.

- <<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտում բացակայում են /կցված չեն/ հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ գնի առաջարկը և հայտի ապահովումը,

դ) Մասնակիցների կողմից առաջարկած գները հետևյալն են.

(ՀՀ դրամ)

N	Մասնակցի անվանումը	Արժեք (Ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ	450000	-	-
2	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	315000	-	315000
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	250000	50000	300000

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բանակցային ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

հ/հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ	Անբավարար
2	<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	Բավարար
3	«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

1.3 Մերժել <<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտը՝ <<Անբավարար>> գնահատվելու պատճառով. հետևյալ հիմնավորմամբ.

- <<ՍԱՄԱՐՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտում բացակայում են /կցված չեն/ հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ գնի առաջարկը և հատի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

2. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ս. Մաթևոսյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Մասնակցի	
անվանումը	զբաղեցրած տեղը
«ՀՀ նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ	1
<<Նորայր և ընկերներ>> ՍՊԸ	2

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Ս. Մաթևոսյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման
<u>օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>
(Ս. Մաթևոսյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 3.1 կետով նախատեսված հարցման պատասխանի ստացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը՝ 11:00-ին, բայց ոչ ուշ՝ քան 2017 թվականի դեկտեմբերի 22-ի ժամը՝ 11:00-ն, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի նախագահ		Ս. Մաթևոսյան
անդամներ		Վ. Առաքելյան
		Ա. Քոչարյան
		Մ. Սարիբեկյան
		Ն. Մանուկյան
քարտուղար		Հ. Ավետիսյան